

Սյունիքում մեկնարկել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլը

Փետրվարի 4-6-ը Սյունիքի մարզի 4 տարածաշրջաններում մեկնարկել է հանրապետական առարկայական օլիմպիադայի տարածքային փուլը:

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Յ. Ալեքսանյանը, կրթության բաժնի պետ Յ. Հարությունյանը և մշակույթի և սպորտի բաժնի պետ Ս. Դավթյանը այցելել են կրթական հաստատություններ՝ տեղում ծանոթանալու հանրապետական առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի ընթացքին: ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Յովիկ Ալեքսանյանը հանդիպել է օլիմպիադային մասնակցող աշակերտների հետ, զրուցել նրանց հուզող հարցերի շուրջ:

Փետրվարի 4-ին մարզի օլիմպիականները մրցեցին <<Պատմություն>>, <<Ռուսաց լեզու >> և <<ՆՁՊ >> առարկաներից, որոնք կայացան Կապանի թիվ 1, Գորիսի թիվ 2, Սիսիանի թիվ 2 հիմնական և Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցներում:

Փետրվարի 5-ին Կապանի թիվ 7, Գորիսի թիվ 6, Սիսիանի թիվ 4 հիմնական և Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցներում կայացան անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և <<Հայոց եկեղեցու պատմություն>> և <<Հայ գրականություն>> առարկաների օլիմպիադաները:

Փետրվարի 6-ին <<Հայոց լեզու>> և <<Աշխարհագրություն>> առարկաների օլիմպիադաները անցկացվեցին Կապանի թիվ 6, Գորիսի թիվ 3, Սիսիանի թիվ 5 հիմնական և Մեղրիի թիվ 1

Միջնակարգ դպրոցներում:

Այս տարի առաջին անգամ փետրվարի 7-14-ին <<Մաթեմատիկա>> և <<Ֆիզիկա>> առարկաների հետ միասին համացանցի միջոցով կանցկացվեն նաև <<Քիմիա>>, <<Աստղագիտություն>>, <<Կենսաբանություն>>, <<Ինֆորմատիկա>> առարկաների օլիմպիադաները:

Առցանց օլիմպիադաները կկայանան հետևյալ ժամանակացույցով.

- <<Մաթեմատիկա>> փետրվարի 7-ին ժամը 10-ին
- <<Քիմիա>> փետրվարի 9-ին ժամը 12-ին
- <<Աստղագիտություն>> փետրվարի 11-ին ժամը 12-ին
- <<Կենսաբանություն>> փետրվարի 12-ին ժամը 12-ին
- <<Ինֆորմատիկա>> փետրվարի 13-ին ժամը 12-ին
- <<Ֆիզիկա>> փետրվարի 14-ին ժամը 10-ին

